# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 28-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի մարտի 15-ի հերթական թիվ 4 նիստի հետևյալ օրակարգը՝
   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի հերթական թիվ 4 նիստի օրակարգը հաստատելու մասին
   1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.
   1.3 «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական սահմաններում գտնվող պղնձաձուլական գործարանի արտադրական տարածքներում ու դրա հենքի վրա նոր տեսակներով նախատեսվող արտադրական գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին
   1.4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու և կանոնակարգը հաստատելու մասին
   1.5 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին
   1.6 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող մի քանի հողամաս օտարելու մասին.

1.7 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկան համայնքի ավագանու՝ 16.03.2011 թվականի N 4, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու՝ 06.02.2018 թվականի N 14-Ա, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 02.09.2020 թվականի N 69-Ա, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Այրում համայնքի ավագանու՝ 01.07.2011 թվականի N 10-Ա, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու՝ 15.10.2018 թվականի N 68-Ա, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու՝ 22.04.2014 թվականի N 12-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին

1.8 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 125-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

1.9 Անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Ալավերդու բարեկարգում» ՀՈԱԿ-ին գույք ամրացնելու մասին.

1.10 Անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին գույք ամրացնելու մասին:

1.11 Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-088-008-0009 ծածկագրով, 0.098 հա մակերեսով համայնքային սեփականության հողամասը քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելու մասին

1.12 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող հողամաս օտարելու մասին

1.13 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքին պատկանող UAZ մակնիշի տրանսպորտային միջոցին Ալավերդի համայնքի Կաճաճկուտ բնակավայրի բնակիչների համար Կաճաճկուտ-Ալավերդի երթուղի իրականացնելուն և վառելիք տրամադրելուն համաձայնություն տալու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | [signature] | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | [signature] | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | [signature] | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | [signature] | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | [signature] | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | [signature] | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | [signature] | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 29-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի ապրիլի 12 -ը, ժամը՝ 16:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 30-Ա**

### «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓԸՐ ՓՐՈԳՐԱՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊՂՆՁԱՁՈՒԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՈՒ ԴՐԱ ՀԵՆՔԻ ՎՐԱ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի `

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սպանդարյան փողոց (նախկին՝ Կիրովի փողոց) 4 հասցեով գտնվող՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտադրական տարածքում ու դրա հենքի վրա հետևյալ տեսակներով նախատեսվող արտադրական գործունեության իրականացման համար՝
   1) Պղնձակիր հումքի (այդ թվում՝ պղինձ պարունակող հին լցակույտերի լեռնային զանգվածների, պղինձ պարունակող ապարների և/կամ առաջնային հանքաքարի, պղինձ պարունակող հումքի մետալուրգիական վերամշակման արդյունքում գոյացած խարամի) վերամշակում ֆլոտացիոն եղանակով՝ տարեկան մինչև 100 հազար տոննա արտադրողականությամբ.
   2) Պղնձակիր հումքի (այդ թվում՝ պղնձի խտանյութերի, պղնձի հանքաքարի, պղինձ պարունակող հումքի մետալուրգիական վերամշակման արդյունքում գոյացած խարամի) տարրալվացում APL (Atmospheric Polymineral Leaching) տեխնոլոգիայով, տարեկան 2.000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ).
   3) Տարեկան 2.000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ) կատոդային պղնձի արտադրություն SX-EW (Solvent Extraction-Electrowinning) տեխնոլոգիայով.
   4) Տարեկան 2.000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ) պղնձի փոշու արտադրություն ցեմենտացիոն մեթոդով.

5) Պղնձե գլոցուկի արտադրություն՝ տարեկան 1.000 տոննա, 8մմ և (կամ) 13մմ տրամաչափով գլոցուկների թողարկման արտադրողականությամբ.

6) Պղնձե խողովակների արտադրություն՝ տարեկան 1.000 տոննա արտադրողականությամբ.

7) Պղնձե փայլաթիթեղի արտադրություն՝ 9-100 միկրոմետր հաստությամբ և տարեկան 200 տոննա արտադրողականությամբ.

8) Պղնձարջասպի արտադրություն՝ պղնձի ջարդոնի կամ պղնձի սուլֆատի լուծույթի խառնատմամբ.

9) Ցեմենտացիոն պղնձի լուծույթներից երկաթարջասպի արտադրություն՝ տարեկան մինչև 10.000 տոննա արտադրողականությամբ.

10) Գունավոր մետաղների համաձուլվածքների արտադրություն.

11) Մետաղափոշիների հիմքով ներկերի արտադրություն.

12) Ցածր ջերմաստիճանային զոդանյութերի արտադրություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | [signature] |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | [signature] | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | [signature] | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | [signature] | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | [signature] | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 31-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-80-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման կարգի VIII գլխով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով մրցութային կարգով տրամադրման կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՋԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՋԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ալավերդի
համայնքի ավագանու՝
2024 թվականի մարտի 15-ի N **31-Ա**
որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՍՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ ՂՈՒՄԱՇՅԱՆ** - Ալավերդի համայնքի ղեկավար (հանձնաժողովի նախագահ),
2. **ԼԻԱՆՆԱ ՊԱՐՈՒՅՐԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ** - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ(հանձնաժողովի քարտուղար),
3. **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԲԵՐՏԻ ՋԱՎԱՐՅԱՆ** – Ալավերդի համայնքի ղեկավարի տեղակալ (հանձնաժողովի անդամ),
4. **ՀՐԱՅՐ ՀՐԱՉԻԿԻ ՆԱԶԱՐՅԱՆ** - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պայմանագրային աշխատող (հանձնաժողովի անդամ),
5. **ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՏԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ** - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, ՔՊ խմբակցություն, (հանձնաժողովի անդամ),
6. **ՄԿՐՏԻՉ ԱԼԲԵՐՏԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ** - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, ՔՊ խմբակցություն, (հանձնաժողովի անդամ),
7. **ԿԱՐԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ ԿՈՆԻՆՅԱՆ** - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ- իրավաբան (հանձնաժողովի անդամ):

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ալավերդի համայնքի ավագանու
2024 թվականի մարտի 15-ի N 31-Ա որոշման

# Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը, որոնք բխում են ՀՀ Հողային օրենսգրքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման դրույթներից:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման մասին համաձայնությունը տալիս է համայնքի ավագանին՝ սահմանելով մրցութային եղանակով տրամադրվող հողամասերի վարձավճարի մեկնարկային գները և այլ էական պայմանները:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի կազմակերպումն ու անցկացումն իրականացվում է համայնքի ավագանու որոշմամբ ստեղծված մրցութային հանձնաժողովը:
5. Մրցութային հանձնաժողովն իր աշխատանքների կազմակերպումն իրականացնում է ՀՀ Հողային օրենսգրքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման, համայնքի ավագանու որոշումներին և սույն կանոնակարգին համապատասխան:
6. Մրցույթներն անցկացվում են բաց, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում՝ համայնքապետարանի շենքում (հասցե՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, շենք 8/1, 4-րդ հարկ, նիստերի դահլիճ): Մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ:

## II. ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ

7. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81-րդ հոդվածներին համապատասխան՝ հողամասը վարձակալության է տրամադրվում ժամանակավոր օգտագործման համար:
8. Հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարվանից ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության

ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:

9. Հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

10. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է՝
   ա/ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին,
   բ/ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց,
   գ/ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց,
   դ/ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպություններին:

11. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝
   ա/ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու,
   բ/ ընդհանուր օգտագործման տարածքները /զբոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր/՝ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու,
   գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում:

12. Վարձակալության իրավունքով տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա կարող են կառուցվել միայն գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր և շինություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան:

13. Հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի $48^1$-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցութային կարգով՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

14. Հողամասերը մրցույթներով տրամադրելու համար վարձավճարի (վճարի) մեկնարկային չափը սահմանվում է համայնքի ղեկավարի կողմից, որը չպետք է պակաս լինի տվյալ հողամասի համար սահմանված հողի հարկի տարեկան դրույքաչափից:

## III. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

15. Համայնքի ղեկավարի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման որոշման ընդունումից հետո հանձնաժողովը կազմում և հրապարակում է տեղեկատվություն, որը ներառում է՝
   1) Մրցույթի անցկացման տարին, ամիսը, օրը և ժամը, ինչպես նաև վայրը,
   2) մրցույթի կազմակերպչի անունը, ազգանունը, պաշտոնը,
   3) մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը,
   4) մրցույթի ձևը, անցկացնելու կարգը և պայմանները,

5) մրցույթի լոտի նկարագրությունը,
6) մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
7) մրցույթի հաղթողին որոշելու կարգը,
8) սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և պայմանները,
9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը,
10) մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճեն տրամադրելու կարգը,
11) հանձնաժողովը կարող է սահմանել լրացուցիչ այլ պայմաններ և պահանջներ,
12) սույն կարգով սահմանված հողատարածքների ձեռքբերման ծախսերը կատարվում են մրցույթում հաղթող անձանց միջոցներով:

16. Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի մրցույթի կայացումից առնվազն մեկ ամիս առաջ, զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ http://www.azdarar.am, ինչպես նաև Ալավերդի համայնքի www.alaverdi.am պաշտոնական ինտերնետային կայքէջում:
17. Մրցույթի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել օրենքով սահմանված կարգով:

## IV. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

18. Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձիք մրցույթի մասին ծանուցման մեջ սահմանված ժամկետում ներկայացնում են հայտ, մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագրի/ իրավաբանական անձի դեպքում պետ. ռեգիստրի վկայական, կանոնադրություն և մրցույթին մասնակցող անձի լիազորագիր:
19. Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձիք վճարում են նախավճար, որի չափը չի կարող գերազանցել մրցույթի առարկայի նախնական գնի 5%-ը: Նախավճարը վճարվում է անկանխիկ եղանակով:
20. Սահմանված հայտը լրացնելու և նախավճարը վճարելու դեպքում մրցույթի կազմակերպիչը պարտավոր է մասնակցին տրամադրել մասնակցի վկայական, որտեղ նշվում է մրցույթի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը մրցույթի անցկացման վայրը (հասցեն) ամսաթիվը:
21. Մրցույթի մասնակից չհամարվող անձանց համար սահմանվում է մուտքի վճար 5 000 (հինգ հազար) դրամի չափով:
22. Մրցույթի հայտեր ընդունելը պետք է դադարի մրցույթի անցկացման օրվանից երեք օր առաջ, իսկ մասնակիցներին մասնակցի վկայական տրամադրելը, ինչպես նաև մրցույթի մասնակից չհամարվող անձանց տոմսերի վաճառքը պետք է դադարի մրցույթի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ, եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:
23. Մրցույթի մասնակցության հայտեր ներկայացնողների վերաբերյալ տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

## V. ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔԸ

24. Նախքան մրցույթի սկսվելը կազմակերպիչը գրանցում է մրցույթի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր:
25. Մրցույթը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է մրցույթում տրամադրվող լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի

նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև մրցույթի անցկացման ձևը, այդ թվում գնային հայտեր ներկայացնելու կարգը:

26. Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան մրցութավարի մուրճի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը ոչ պակաս նվազագույն հավելման չափով:
27. Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը, իսկ միայն գնային առաջարկով մրցույթի դեպքում առավելագույն գին առաջարկած մասնակիցը:
28. Մրցույթում առաջարկած հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին, կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին:

## VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

29. Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որն իր մեջ ներառում է տվյալներ՝ մրցույթի անցկացման վայրի, ժամկետի մասնակիցների և կազմակերպչի, հողամասի վարձակալության ժամկետների, հողամասի և վարձավճարի չափերի, հողամասի օգտագործման նպատակային գործառնական նշանակության, հողամասի օգտագործման պայմանների, հաղթողին տրվող իրավունքների, ինչպես նաև մրցույթի այլ պայմանների մասին:
30. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը: Նա զրկվում է նաև մրցույթը չկայանալու պարագայում հողամասի առանց մրցույթի վարձակալելու կամ կառուցապատման իրավունքից: Եթե մրցույթի արձանագրությունն ստորագրելուց հրաժարվում է հանձնաժողովը, ապա կազմակերպիչը պարտավոր է մրցույթում հաղթած անձի նախավճարը վերադարձնել կրկնակի չափով:
31. Մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի և մրցույթում հաղթած անձի միջև կնքվում է հողի վարձակալության կամ կառուցապատման պայմանագիր:
32. Վարձակալության կամ կառուցապատման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
33. Եթե հողթող ճանաչված մասնակցին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

## VII. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼԸ

34. Մրցույթը չկայացած է համարվում, եթե մրցույթին հայտ չի ներկայացվել: Այդ դեպքում մրցույթը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը: Մրցույթի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
35. Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել հողային օրենսգրքով սահմանված կարգով և սույն կանոնակարգով և ժամկետներում:
36. Կրկնակի մրցույթի չկայանալու դեպքում հողամասը կարող է տրամադրվել առանց մրցույթի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ
**15 մարտի 2024 թվական, N 32-Ա**

### ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 29.09.2023թ. N 1151-Ա, 26.09.2023թ. N 1131-Ա, 15.12.2023թ. N 1431-Ա, 9.09.2023թ. N 1161-Ա, որոշումները, սեփականության իրավունքի N 19012024-06-0056 (գաղտնաբառ՝ NGGNNCLIQQCS), N 14022024-06-0110 (գաղտնաբառ՝ ALAMU1Z5NZJ7), N 15022024-06-0041 (գաղտնաբառ՝ Z7B5AZC1B5N6), N 06112023-06-0046 (գաղտնաբառ՝ HVEWJXVEMADC) վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 6/3 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 29.09.2023թ. N 1151-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 75.0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.1 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-112-0436-0012/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Ռուբեն Հմայակի Նիազյանին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Թումանյան փողոց, 55/4 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 26.09.2023թ. N 1131-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 85.6 քմ արտաքին մակերեսով ավտոտեխսպասարկման կայանը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00412 հա բնակավայրերի նպատակային հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0158-0078/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Գրիգոր Կոմիտասի Վելոյանին:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Թումանյան փողոց, 40/10 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 15.12.2023թ. N 1431-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 40.3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00403 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0047-0193/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Վոլոդյա Հենրիկի Հակոբյանին:
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 23-րդ փողոց, 21/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 29.09.2023թ. N 1161-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 8.5 քմ արտաքին մակերեսով մառանը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.05064 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-060-0050-0007/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Գերասիմ Էդիկի Մելքումյանին:
5. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ ՋԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 33-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասերի հատակագծերը (չափագրման ծածկագրեր՝ 2024HUDKZE, 2024YSU6LZ, 2024VSWKXU, 2024MQXNQK, 2024ANDCGB, 2024G9FU7P), սեփականության իրավունքի N 13112023-06-0015, 29112023-06-0074, 29112023-06-0082, 13092023-06-0011 վկայականները, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Ճոճկան գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-069-0145-0015 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, 0.33936 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 2 885 000 (երկու միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող, Ճոճկան գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-069-0145-0016 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, 0.30839 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 2 200 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի

չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 49/6 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0061-0187 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0036 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 49/8 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0061-0189 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0036 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

5. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 49/10 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0061-0188 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0036 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

6. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 1/12 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0268 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00528 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

7. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական տարածքում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային

քարտեզի 06-002-0150-0001 ծածկագրից առանձնացվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.09173 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 2 350 000 (երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

8. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0001 ծածկագրից առանձնացվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0.0697 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

9. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0001 ծածկագրից առանձնացվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 1.0561 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 8 500 000 (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

10. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակությային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

11. Հողամասերի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

12. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:

13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 34-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃՈՃԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 16.03.2011 ԹՎԱԿԱՆԻ N 4, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 06.02.2018 ԹՎԱԿԱՆԻ N 14-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 02.09.2020 ԹՎԱԿԱՆԻ N 69-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ Հ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 01.07.2011 ԹՎԱԿԱՆԻ N 10-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 15.10.2018 ԹՎԱԿԱՆԻ N 68-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 22.04.2014 ԹՎԱԿԱՆԻ N 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝

համայնքի *ավագանին* ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկան համայնքի ավագանու՝ 16.03.2011 թվականի «Ճոճկանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N4 որոշմամբ հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու՝ 06.02.2018 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 14-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 02.09.2020 թվականի Հայաստանի Հանրապետության Լոռու

մարզի «Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 69-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Այրում համայնքի ավագանու՝ 01.07.2011 թվականի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Մեծ Այրումի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 10-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու՝ 15.10.2018 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 68-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու՝ 22.04.2014 թվականի «Ախթալա համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին» N 12-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
7. Հաստատել որոշման 1, 2, 3, 4, 5, 6 կետերով նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների մեջ կատարվող փոփոխությունները:
8. Հանձնարարել որոշման 1, 2, 3, 4, 5, 6 կետերով նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կատարել սույն որոշումից բխող գործառույթներ:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

**2024թ., մարտի 15,**
**Լոռու մարզ, ք. Ալավերդի**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝

15 ՄԱՐՏԻ 2024Թ.,

ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. Ղումաշյան

ԿԱԶՄՎԱԾ Է ՈՐՈՇՄԱՆ ՕՐԸ
15.03. 2024 Թ.
ԲԱՂԿԱՑԱԾ Է 10 /տասնմեկ/ ԹԵՐԹԻՑ
ՏՊԱԳՐՎԱԾ Է 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱ ՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ
ԳՐԱՆՑՄԱՆ ՕՐԸ
ՀՎՀՀ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐՈՒՄ
«______» _____________ 2024Թ.

# «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈԾԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Ք. Ալավերդի 2024թ.

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ալավերդի համայնքի Ճոճկանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնադաստիարակչական հաստատություն է, որն ապահովում է 3-ից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, առողջության ամրապնդումը, դաստիարակությունը և ուսուցումը:

«Ալավերդի համայնքի Ճոճկանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն բյուջետային հիմնարկի վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

1.2 Հաստատության հիմնադիրն է Ալավերդու համայնքը ի դեմս համայնքի ղեկավարի՝ համայնքի ավագանու որոշմամբ:

1.3 Հաստատությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Հաստատությունը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում

- կանոնադրությամբ ամրագրված իր ֆունկցիաների կատարման
- կրթական ծրագրերի իրականացման, ծավալի և որակի
- կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդների և ձևերի
- երեխաների կյանքի և առողջության պահպանման համար:

1.5 Հաստատությունը, որպես սեփականություն,ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Հաստատությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքեր, կրում պարտականություններ և դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6 Հաստատությունն ունի ՀՀ զինանշանով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.7 Հաստատության հայերեն անվանումն է.

Հայերեն Լրիվ՝ «Ալավերդի համայնքի Ճոճկանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հայերեն կրճատ՝ «Ալավերդի համայնքի Ճոճկանի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ Детский сад Чочкан общины Алаверди " общественная некоммерческая организация

Ռուսերեն կրճատ՝ Детский сад Чочкан общины Алаверди " ОНО

Անգլերեն լրիվ՝ " Kindergarten of the Chochkan community of Alaverdi " community non-commercial organization

Անգլերեն կրճատ՝ "Kindergarten of the Chochkan community of Alaverdi" CNCO

1.8 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.9 Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.10 Հաստատությունում երեխաների հաղորդակցության և դաստիարակության լեզուն հայերենն է:

1.11 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
1.12 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:
1.13 Հաստատության իրավաբանական և գործունեության հասցեն.
1723 Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, բնակավայր Ճոճկան, փողոց 5, շենք 12:

## 2 . ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթադաստիարակչական գործունեության իրականացումն է:
2.2 Հաստատության կրթադաստիարակչական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
2.3 Հաստատության հիմնախնդիրներն են՝

2.3 Հաստատության հիմնախնդիրներն են՝
- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը
- առողջության ամրապնդումն ու խնամքը
- մայրենի լեզվով հաղորդակցվելու, դրա հիմքերի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները
- հաշվելու տարրական կարողությունների զարգացումը
- վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը
- երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը
- հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զարգացման ձևավորումը
- աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը
- զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը
- անվտանգ վարքագծի դաստիարակումը
- դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2.4 Հաստատության գործունեությունը հիմնվում է
- ժողովրդավարության
- մարդասիրության
- հանրամատչելիության
- ազգային և համամարդկային արժեքների զուգորդման
- անձի ազատ զարգացման
- ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.5 Հաստատությունը պատասխանատու է՝

-պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին,երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին

- համապատասխան ուսուցման մեթոդների ու ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:

2.6 Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմիցսահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

- լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում
- մարզաառողջարարական ծառայությունների կազմակերպում
- զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական, շտկողական ծառայությունների կազմակերպում:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Հաստատության կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրերին համապատասխան:

3.2 Հաստատությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

3.3 Հաստատությունը կազմակերպվում է սանիտարահիգիենիկ հակահամաճարակային ու հակահրդեհային անվտանգության նորմերին համապատասխանող շենքում:

3.4 Հաստատությունը կահավորվում է համապատասխան գույքով, բժշկական ու կենցաղային անհրաժեշտ սարքավորումներով, ուսումնադիտողական պարագաներով և խաղալիքներով:

3.5 Հաստատության աշխատակազմը սահմանված կարգով հաստատում է համայնքի ղեկավարը:

3.6 Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում է նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:

Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

3.7 Անհրաժեշտության դեպքում աշխատանքային գրաֆիկի և աշխատաժամի տևողության փոփոխությունը կատար-վում է համայնքի ղեկավարի թույլտվությամբ:

3.8 Հաստատության ստեղծումը և նրա գործունեության դադարեցումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.9 Հաստատության անվանակոչությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.10 Հաստատություն ընդունվում են 0-ից մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

3.11 Երեխային հաստատություն ընդունելու համար ծնողը ներկայացնում է՝

- դիմում՝ ուղղված տնօրենին.
- երեխայի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի բնօրինակը և պատճենը:
- լուսանկար՝ 3 x4 չափսի՝ Կառավարման համակարգ ներբեռնելու նպատակով.
- երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածք.
- երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ վկայագիր:

3.12 Հաստատության խմբերի խտությունը սահմանվում է՝ համաձայն գործող պետական չափորոշիչների:

3.13 Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման,սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

3.14 Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները /օրինական ներկայացուցիչները /, մանկավարժական աշխատողները:

4.2 Երեխաների ընդունելության ժամանակ տնօրինությունը պարտավոր է ծնողներին /օրինական ներկայացուցիչներին/ ծանոթացնել սույն կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

4.3 Հաստատության և ծնողների հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

4.4 Երեխաների և հաստատության աշխատողների հարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիման վրա:

4.5 Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին

համապատասխան անհրաժեշտ մասնագիտական–մանկավարժական որակավորում:

4.6 Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենսդրության համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

4.7 Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը / այսուհետ՝ տնօրեն /:

5.2 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծում տալու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.3 Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը
- հաստատության գործունեության առարկայի նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը
- հաստատության սեփականության իրավունքով հանձնվող և կամ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը
- հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը
- հաստատության կառավարման կարգի հաստատումը
- հաստատության վերակազմավորումը և լուծարումը
- հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը
- ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված և այլ հարցերի լուծումը:

5.4 Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.5 Համայնքի ղեկավարը՝

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ,

- կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները,
- լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
- վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
- համայնքի ավագանու որոշմամբ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության համար,
- հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն,
- համայնքի ավագանու համաձայնությամբ նշանակում է հաստատության տնօրենին:

5.6 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավո-րում է խորհրդակցական մարմին մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

5.7 Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների,սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.8 Տնօրենը
- առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ
- սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները
- նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերին
- ՀՀ օրենսդրությամբ,համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը,այդ թվում `ֆինանսական միջոցները
- տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր
- աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
- կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

- օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմանում արձակում է հրամաններ. հրահանգներ, տալիս ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն, ստեղծում ան-հրաժեշտ պայմաններ նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային արտականությունների նկատմամբ,
- ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
- կազմում է հաստատության հաստիքային ցուցակը ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը,
- իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմինների չվերապահված լիազորություններ:

5.9 Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման /հրամանի/ համաձայն տնօրենի լիազորությունները իրականացնում է այլ անձ:

5.10 Փոխտնօրենը և մեթոդիստը / տնօրենի ուսումնական գծով տեղակալը /
- իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը,
- ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը,
- պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար,
- կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը,
- ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն,
- դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների դրույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին,
- կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

5.11 Դաստիարակը՝
- պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը
- պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար,
- մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

5.12 Երաժշտական ղեկավարը՝
- տիպային ծրագրին համապատասխան՝ դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը,
- ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիա-րակության հարցերի շուրջ:

5.13 Տնտեսական մասի վարիչը /տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը /

- կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի, սարքավորումների ստացումն ու պահպանումը,
- մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր հայտերի կազմմանը,
- հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների , վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու
- պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

6.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

6.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

6.4 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

6.5 Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

6.6 Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը

6.7 Հաստատությունն իրավունք չունի

- ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու,գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
- ամրացված գույքի վարձակալության ժամկետը սահմանել մեկ տարվանից ավելի, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

6.8 Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի,ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ:

6.9 Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են:
Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

6.10. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

6.11. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը:Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

6.12 . Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են`

- հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները
- բարեգործական նպատակային ներդրումները
- Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

6.13 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.14 Հաստատության ծնողական վճարները ենթակա են փոխանցման Ալավերդու համայնքապետարանի բյուջե:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝

15 ՄԱՐՏԻ 2024.Թ,

ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. Ղումաշյան

ԿԱԶՄՎԱԾ Է ՈՐՈՇՄԱՆ ՕՐԸ
15.03. 2024 Թ.
ԲԱՂԿԱՑԱԾ Է 15 /տասնհինգ/ ԹԵՐԹԻՑ
ՏՊԱԳՐՎԱԾ Է 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱ ՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ
ԳՐԱՆՑՄԱՆ ՕՐԸ
ՀՎՀՀ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐՈՒՄ
«_____» ____________ 2024Թ.

# «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎՆԵՐ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ք. Ալավերդի 2024թ.

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «Արևներ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ: Հաստատությունը ստեծվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 06.02.2018թ. թիվ 14-Ա որոշման համաձայն:

1.2 Հաստատության հիմնադիրն է Ալավերդու համայնքը ի դեմս համայնքի ղեկավարի՝ համայնքի ավագանու որոշմամբ:

1.3 Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

1.4. Հաստատության իրավաբանական հասցեն է՝ 1731. ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, գյուղ Օձուն, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, շենք 1: Մանկապարտեզը գործունեություն է ծավալում նաև Ալավերդի համայնքի Օձուն / փ.8,շ 7/, Մղարթ / փողոց 8,շ.4 /, Արևածագ /փ. 1, շ 12/ և Ծաթեր / փ 7, շ 4 / բնակավայրերի նշյալ հասցեներում:

1.5. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6. Հաստատության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Ալավերդի համայնքի «Արևներ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հայերեն կրճատ՝ «Ալավերդի համայնքի «Արևներ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ "Детский сад "Аревнер" общины Алаверди" Общественная некоммерческая организация

Ռուսերեն կրաճ՝ "Детский сад "Аревнер" общины Алаверди" ОНО

Անգլերեն լրիվ՝ "Kindergarten "Arevner" of Alaverdi community" community non-commercial organization

Անգլերեն կրճատ՝ "Nursery-kindergarten of the Odzuni community of Alaverdi" CNCO

1.7 Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

1.8 Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

1.9 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.10 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.11 Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.12 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

2.2 Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն

մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

2.3 Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

2.4 Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2.5 Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.6 Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

2.7 Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

2.8 Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

3.2 Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

3.3 Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

3.4 Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

3.5 Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

3.6 Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.7 Հաստատություն ընդունվում են 2-6 տարեկան երեխաները:

3.8 Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.9 Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

3.10 Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

3.11 Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

3.12 Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

3.13 Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

3.14 Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

3.15. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

3.16 Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

4.2 Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

4.3 Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

4.4 Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

4.5 Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

4.6 Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

5.2 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.3 Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

5.4 Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

5.5 Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

5.6 Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

5.7 Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

5.8 Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.9 Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

5.10 Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում` 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

5.11 Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)`

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

5.12 Դաստիարակը`

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

5.13 Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)`

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

**5.14 Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչը՝**

1) երեխաներին ուսուցանում է տիրապետել վարժությունների կատարման տեխնիկային և հմտություններին, ձևավորում էնրանց բարոյակամային որակները:Ապահովում է երեխաների անվտանգությունը ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ժամանակ.

2)բուժաշխատողների հետ միասին հսկում է երեխաների առողջական վիճակը,պատասխանատվություն է կրում նրանց կյանքի, առողջության համար.

3) ծնողների շրջանում պարբերաբար կատարում է բացատրական աշխատանք՝պարապմունքներին երեխաների նախապատրաստման ուղղությամբ:

**5.15 Հոգեբանը՝**

**1) աշխատանքներ է տանում երեխաների հոգեկան առողջության և անձի զարգացման ապահովման ուղղությամբ.**

2) բացահայտում է հուզական և մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին,ցույց է տալիս սոցիալ-հոգեբանական աջակցություն:

3) մասնակցում է երեխաների , ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հոգեբանական կուլտուրայի,այդ թվում նաև սեռային դաստիարակության կուլտուրայի ձևավորմանը:

5.16 Լոգոպետ

1)Ախտորոշում է խոսքի խանգարման խնդիրները.

2)տեղեկություններ է հաղորդում տվյալ խոսքային խանգարման վերբերյալ, հստակեցնում է դրանց հաղթահարման ուղիները.

3)կազմում է լոգոպետական աշխատանքի անհատական ծրագիր:

**5.18 Տնտեսական մասի վարիչը** (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

6.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

6.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

6.4 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

6.5 Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

6.6 Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

6.7 Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

6.8 Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

6.9 Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

6.10 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

6.11 Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

6.12 Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

6.13 Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

6.14 Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

6.15 Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

6.16 Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6.17 Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

6.18 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝

15 ՄԱՐՏԻ 2024Թ.,

ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. Ղումաշյան

ԿԱԶՄՎԱԾ Է ՈՐՈՇՄԱՆ ՕՐԸ
15.03. 2024 Թ.
ԲԱՂԿԱՑԱԾ Է 11 /տասնմեկ/ ԹԵՐԹԻՑ
ՏՊԱԳՐՎԱԾ Է 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱ ՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ
ԳՐԱՆՑՄԱՆ ՕՐԸ
ՀՎՀՀ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐՈՒՄ
«______» ______________ 2024Թ.

# «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԵՔԻԱԹ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Ք. Ալավերդի 2024թ.

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ալավերդի համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնադաստիարակչական հաստատություն է, որն ապահովում է 2-ից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, առողջության ամրապնդումը, դաստիարակությունը և ուսուցումը:

«Ալավերդի համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է «ՀՀ Լոռու մարզի Շնողի «Հեքիաթ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն բյուջետային հիմնարկի վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

1.2 Հաստատության հիմնադիրն է Ալավերդու համայնքը ի դեմս համայնքի ղեկավարի՝ համայնքի ավագանու որոշմամբ:

1.3 Հաստատությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Հաստատությունը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում

- կանոնադրությամբ ամրագրված իր ֆունկցիաների կատարման
- կրթական ծրագրերի իրականացման, ծավալի և որակի
- կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդների և ձևերի
- երեխաների կյանքի և առողջության պահպանման համար:

1.5 Հաստատությունը, որպես սեփականություն,ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Հաստատությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքեր, կրում պարտականություններ և դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6 Հաստատությունն ունի ՀՀ զինանշանով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.7 Հաստատության հայերեն անվանումն է.

Հայերեն Լրիվ՝ «Ալավերդի համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հայերեն կրճատ՝ «Ալավերդի համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ Детский сад «Экиат» общины Алаверди " общественная некоммерческая организация

Ռուսերեն կրճատ՝ Детский сад «Экиат» общины Алаверди " ОНО

Անգլերեն լրիվ՝ "Kindergarten "Heqiat" of the Alaverdi community " community non-commercial organization

Անգլերեն կրճատ՝ "Kindergarten "Heqiat" of the Alaverdi community " CNCO

1.8 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.9 Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.10 Հաստատությունում երեխաների հաղորդակցության և դաստիարակության լեզուն հայերենն է:

1.11 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.12 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.13 Հաստատության իրավաբանական և գործունեության հասցեն.

1728 Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, բնակավայր Շնող, փողոց 5, շենք 7, Թողուտ բնակավայր փողոց 2, փակուղի 1, շենք 2/1, Քարկոփ բնակավայր փողոց 1, շենք 15

## 2 . ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթադաստիարակչական գործունեության իրականացումն է:

2.2 Հաստատության կրթադաստիարակչական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

2.3 Հաստատության հիմնախնդիրներն են՝

- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը
- առողջության ամրապնդումն ու խնամքը
- մայրենի լեզվով հաղորդակցվելու, դրա հիմքերի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները
- հաշվելու տարրական կարողությունների զարգացումը
- վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը
- երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը

- հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զարգացման ձևավորումը
- աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը
- զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը
- անվտանգ վարքագծի դաստիարակումը
- դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2.4 Հաստատության գործունեությունը հիմնվում է
- ժողովրդավարության
- մարդասիրության
- հանրամատչելիության
- ազգային և համամարդկային արժեքների զուգորդման
- անձի ազատ զարգացման
- ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.5 Հաստատությունը պատասխանատու է
- պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին,երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին
- համապատասխան ուսուցման մեթոդների ու ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:

2.6 Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմիցսահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝
- լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում
- մարզաառողջարարական ծառայությունների կազմակերպում
- զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական, շտկողական ծառայությունների կազմակերպում:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Հաստատության կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրերին համապատասխան:

3.2 Հաստատությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

3.3 Հաստատությունը կազմակերպվում է սանիտարահիգիենիկ հակահամաճարակային ու հակահրդեհային անվտանգության նորմերին համապատասխանող շենքում:

3.4 Հաստատությունը կահավորվում է համապատասխան գույքով, բժշկական ու կենցաղային անհրաժեշտ սարքավորումներով, ուսումնադիտողական պարագաներով և խաղալիքներով:
3.5 Հաստատության աշխատակազմը սահմանված կարգով հաստատում է համայնքի ղեկավարը:
3.6 Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում է նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:

Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:
3.7 Անհրաժեշտության դեպքում աշխատանքային գրաֆիկի և աշխատաժամի տևողության փոփոխությունը կատար-վում է համայնքի ղեկավարի թույլտվությամբ:
3.8 Հաստատության ստեղծումը և նրա գործունեության դադարեցումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.9 Հաստատության անվանակոչությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.10 Հաստատություն ընդունվում են 0-ից մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:
3.11 Երեխային հաստատություն ընդունելու համար ծնողը ներկայացնում է՝
- դիմում՝ ուղղված տնօրենին.
- երեխայի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի բնօրինակը և պատճենը:
- լուսանկար՝ 3 x4 չափսի՝ Կառավարման համակարգ ներբեռնելու նպատակով.
- երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածք.
– երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ վկայագիր:
3.12 Հաստատության խմբերի խտությունը սահմանվում է՝ համաձայն գործող պետական չափորոշիչների:

3.13 Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման,սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

3.14 Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները /օրինական ներկայացուցիչները /, մանկավարժական աշխատողները:

4.2 Երեխաների ընդունելության ժամանակ տնօրինությունը պարտավոր է ծնողներին /օրինական ներկայացուցիչներին/ ծանոթացնել սույն կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

- պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը
- պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար,
- մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

5.12 Երաժշտական ղեկավարը՝
-տիպային ծրագրին համապատասխան՝ դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը,
- ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիա-րակության հարցերի շուրջ:

5.13 Տնտեսական մասի վարիչը /տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը /
- կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի, սարքավորումների ստացումն ու պահպանումը,
- մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր- հայտերի կազմմանը,

- հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների , վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու
- պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնա րի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
6.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
6.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
6.4 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
6.5 Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:
6.6 Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը
6.7 Հաստատությունն իրավունք չունի
- ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու,գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
- ամրացված գույքի վարձակալության ժամկետը սահմանել մեկ տարվանից ավելի, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
6.8 Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի,ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ:
6.9 Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են:
Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
6.10. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

6.11. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը:Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
6.12 . Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
- հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները
- բարեգործական նպատակային ներդրումները
- Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
6.13 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.14 Հաստատության ծնողական վճարները ենթակա են փոխանցման Ալավերդու համայնքապետարանի բյուջե:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝

15 ՄԱՐՏԻ 2024Թ.,

ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. Ղումաշյան

ԿԱԶՄՎԱԾ Է ՈՐՈՇՄԱՆ ՕՐԸ
15.03. 2024 Թ.
ԲԱՂԿԱՑԱԾ Է 10 /տասը/ ԹԵՐԹԻՑ
ՏՊԱԳՐՎԱԾ Է 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱ ՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ
ԳՐԱՆՑՄԱՆ ՕՐԸ
ՀՎՀՀ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐՈՒՄ
«_____» ___________ 2024Թ.

# «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽԹԱԼԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Ք. Ալավերդի 2024թ.

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ալավերդի համայնքի Ախթալայի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնադաստիարակչական հաստատություն է, որն ապահովում է 0-ից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, առողջության ամրապնդումը, դաստիարակությունը և ուսուցումը:

«Ալավերդի համայնքի Ախթալայի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է ՀՀ Լոռու մարզի «Ախթալա համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» բյուջետային հիմնարկի վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

1.2 Հաստատության հիմնադիրն է Ալավերդու համայնքը ի դեմս համայնքի ղեկավարի՝ համայնքի ավագանու որոշմամբ:

1.3 Հաստատությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Հաստատությունը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում

- կանոնադրությամբ ամրագրված իր ֆունկցիաների կատարման
- կրթական ծրագրերի իրականացման, ծավալի և որակի
- կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդների և ձևերի
- երեխաների կյանքի և առողջության պահպանման համար:

1.5 Հաստատությունը, որպես սեփականություն,ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Հաստատությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ և դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6 Հաստատությունն ունի ՀՀ զինանշանով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.7 Հաստատության հայերեն անվանումն է.

Հայերեն լրիվ՝ «Ալավերդի համայնքի Ախթալայի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հայերեն կրճատ՝ «Ալավերդի համայնքի Ախթալայի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ "Детский сад Ахталы общины Алаверди" общественные некоммерческие организации

Ռուսերեն կրճատ՝ "Детский сад Ахталы общины Алаверди" ОНО

Անգլերեն լրիվ՝ "Kindergarten of Akhtala of Alaverdi community " community non-commercial organization

Անգլերեն կրճատ՝ "Kindergarten of Akhtala of Alaverdi community " CNCO

1.8 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.9 Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.10 Հաստատությունում երեխաների հաղորդակցության և դաստիարակության լեզուն հայերենն է:
1.11 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
1.12 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:
1.13 Հաստատության իրավաբանական և գործունեության հասցեն.
1709 Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, բնակավայր Ախթալա, փողոց Աբովյան, շենք 2/2:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթադաստիարակչական գործունեության իրականացումն է:
2.2 Հաստատության կրթադաստիարակչական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
2.3 Հաստատության հիմնախնդիրներն են՝
- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը
- առողջության ամրապնդումն ու խնամքը
- մայրենի լեզվով հաղորդակցվելու,դրա հիմքերի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները
- հաշվելու տարրական կարողությունների զարգացումը
- վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը
- երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը
- հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զարգացման ձևավորումը
- աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը
- զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը
- անվտանգ վարքագծի դաստիարակումը
- դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
2.4 Հաստատության գործունեությունը հիմնվում է
- ժողովրդավարության
- մարդասիրության
- հանրամատչելիության
- ազգային և համամարդկային արժեքների զուգորդման
- անձի ազատ զարգացման
- ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
2.5 Հաստատությունը պատասխանատու է՝
- պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին,երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական

զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին
- համապատասխան ուսուցման մեթոդների ու ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:
2.6 Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝
- լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում
- մարզաառողջարարական ծառայությունների կազմակերպում
- զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական, շտկողական ծառայությունների կազմակերպում:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Հաստատության կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրերին համապատասխան:
3.2 Հաստատությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:
3.3 Հաստատությունը կազմակերպվում է սանիտարահիգիենիկ հակահամաճարակային ու հակահրդեհային անվտանգության նորմերին համապատասխանող շենքում:
3.4 Հաստատությունը կահավորվում է համապատասխան գույքով, բժշկական ու կենցաղային անհրաժեշտ սարքավորումներով, ուսումնադիտողական պարագաներով և խաղալիքներով:
3.5 Հաստատության աշխատակազմը սահմանված կարգով հաստատում է համայնքի ղեկավարը:
3.6 Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում է նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:
Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:
3.7 Անհրաժեշտության դեպքում աշխատանքային գրաֆիկի և աշխատաժամի տևողության փոփոխությունը կատարվում է համայնքի ղեկավարի թույլտվությամբ:
3.8 Հաստատության ստեղծումը և նրա գործունեության դադարեցումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.9 Հաստատության անվանակոչությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.10 Հաստատություն ընդունվում են 0-ից մինչև 6 տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց

գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

3.11 Երեխային հաստատություն ընդունելու համար պարտադիր ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ ուղղված տնօրենին.

2) երեխայի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի բնօրինակը և պատճենը:

3) լուսանկար՝ 3x4 չափսի՝ Կառավարման համակարգ ներբեռնելու նպատակով.

4) երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածք.

5) երեխայի՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ վկայագիր:

3.12 Հաստատության խմբերի խտությունը սահմանվում է՝ համաձայն գործող պետական չափորոշիչների:

3.13 Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման,սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

3.14 Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները /օրինական ներկայացուցիչները /, մանկավարժական աշխատողները:

4.2 Երեխաների ընդունելության ժամանակ տնօրինությունը պարտավոր է ծնողներին /օրինական ներկայացուցիչներին/ ծանոթացնել սույն կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

4.3 Հաստատության և ծնողների հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

4.4 Երեխաների և հաստատության աշխատողների հարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիման վրա:

4.5 Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական–մանկավարժական որակավորում:

4.6 Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենսդրության համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

4.7 Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը / այսուհետ՝տնօրեն /:
5.2 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծում տալու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
5.3 Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
- ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը
- հաստատության գործունեության առարկայի նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրա-կան գործունեության տեսակների սահմանումը
- հաստատության սեփականության իրավունքով հանձնվող և կամ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը
- հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը
- հաստատության կառավարման կարգի հաստատումը
- հաստատության վերակազմավորումը և լուծարումը
- հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը
- ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված և այլ հարցերի լուծումը:
5.4 Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնակա-նոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
5.5 Համայնքի ղեկավարը՝
- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ,
- կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները,
- լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
- վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

- համայնքի ավագանու որոշմամբ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության համար,
- հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն,
- համայնքի ավագանու համաձայնությամբ նշանակում է հաստատության տնօրենին:

5.6 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավո-րում է խորհրդակցական մարմին մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործա-կցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական ,հո•աբարձուների և այլ խորհուրդներ:

5.7 Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների,սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.8 Տնօրենը
- առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ
- սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները
- նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերին
- ՀՀ օրենսդրությամբ,համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը,այդ թվում `ֆինանսական միջոցները
- տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր
- աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
- կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,
- օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմանում արձակում է հրամաններ. հրահանգներ, տալիս ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն, ստեղծում ան-հրաժեշտ պայմաններ նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային արտականությունների նկատմամբ,
- ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
- կազմում է հաստատության հաստիքային ցուցակը ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը,

- իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմինների չվերապահված լիազորություններ:

5.9 Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման /հրամանի/ համաձայն տնօրենի լիազորությունները իրականացնում է այլ անձ:

5.10 Փոխտնօրենը և մեթոդիստը / տնօրենի ուսումնական գծով տեղակալը /

- իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը,
- ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը,
- պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար,
- կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը,
- ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն,
- դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների դրույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին,
- կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

5.11 Դաստիարակը՝

- պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը
- պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար,
- մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

5.12 Երաժշտական ղեկավարը՝

-տիպային ծրագրին համապատասխան՝ դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը,
- ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիա-րակության հարցերի շուրջ:

5.13 Տնտեսական մասի վարիչը /տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը /

- կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի, սարքավորումների ստացումն ու պահպանումը,
- մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր- հայտերի կազմմանը,
- հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների , վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու
- պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնա րի կողմից սեփականության

իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
6.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
6.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքինկատմամբ չունի իրավունքներ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
6.4 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
6.5 Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:
6.6 Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը
6.7 Հաստատությունն իրավունք չունի
- ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու,գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
- ամրացված գույքի վարձակալության ժամկետը սահմանել մեկ տարվանից ավելի, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
6.8 Հաստատությունն իրավունք ունիիրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի,ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ:
6.9 Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են:
Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
6.10. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
6.11. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը:Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
6.12 . Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
- հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները
- բարեգործական նպատակային ներդրումները
- Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
6.13 Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.14 Հաստատության ծնողական վճարները ենթակա են փոխանցման Ալավերդու համայնքապետարանի բյուջե:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 35-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 125-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 125-Ա որոշման 17-րդ և 24-րդ հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՋԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված 1
Հաստատված է
Ալավերդի համայնքի ավագանու
2024 թվականի մարտի 15-ի
N 35-Ա որոշմամբ

«ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի 2024թ.

# Հ Ա Ս Տ Ի Ք Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 84
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | ՊԱՇՏՈՆԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 350000 | 350000 |
| 2 | Ճարտարագետ | 2 | 220000 | 440000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 165000 | 165000 |
| 4 | Գործավար | 1 | 121000 | 121000 |
| 5 | Հավաքարար | 1 | 110000 | 110000 |
| 6 | Պահակ/գերեզմանի/ | 1 | 110000 | 110000 |
| 7 | Պահակ /գարաժ/ | 3 | 110000 | 330000 |
| 8 | Բրիգադիր | 3 | 179000 | 537000 |
| 9 | Դիսպետչեր- հաշվառող | 1 | 114400 | 114400 |
| 10 | Էլեկտրիկ | 1.5 | 132000 | 198000 |
| 11 | Տրակտորիստ | 3 | 190300 | 570900 |
| 12 | Բանվոր /ջուր/ | 0.25 | 114400 | 28600 |
| 13 | Բարձող բանվոր | 2 | 114400 | 228800 |
| 14 | Բարձող բանվոր | 8 | 148500 | 1188000 |
| 15 | Վարորդ աղբատարի | 5 | 190300 | 951500 |
| 16 | Պահակ –հաշվառող | 1 | 110000 | 110000 |
| 17 | Մեխանիկ-վարորդ | 1 | 168300 | 168300 |
| 18 | Վարորդ | 2 | 157300 | 314600 |
| 19 | Փողոց ավլող | 20 | 110000 | 2200000 |
| 20 | Փողոց ավլող | 7.5 | 114400 | 858000 |
| 21 | Ջրող | 1 | 148500 | 148500 |
| 22 | Բանվոր/ճանապարհա-կամրջային/ | 3 | 143000 | 429000 |
| 23 | Տրակտորիստ | 2 | 231000 | 462000 |
| 24 | Բանվոր /կանաչապատում/ | 10 | 143000 | 1430000 |
| | **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | | |
| 25 | Պայմանագրային աշխատող - տրակտորիստ | 0.5 | 52000+բերած եկամտի 25% | |
| 26 | JAC միկրոավտոբուսի վարորդ | | Վարձատրությունը՝ 1 կմ ուղևորման համար 35 դրամ | |
| 27 | FORD-TRANSIT 17+1 22TD միկրոավտոբուսի վարորդ | | Վարձատրությունը՝ 1 կմ ուղևորման համար 35 դրամ | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **81.75** | | **11563600** |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

Հավելված 2
Հաստատված է
Ալավերդի համայնքի ավագանու
2024 թվականի մարտի 15-ի
N 35-Ա որոշմամբ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի 2024թ.

**ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 32
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 29

| Հ/Հ | ՊԱՇՏՈՆԸ | ԱՇԽԱՏԱ-ԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱ-ՆԱԿԸ | ՀԱՍՏԻՔԱ-ՅԻՆ ՄԻԱՎՈՐ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ | ԸՆԴՀԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 350000 | 350000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 1 | 150000 | 150000 |
| 3 | Գործավար | 1 | 1 | 135000 | 135000 |
| 4 | Ջրի բանվոր | 5 | 4 | 135000 | 540000 |
| 5 | Վարորդ /տ/ | 2 | 2 | 210000 | 420000 |
| 6 | Վարորդ /մ/ | 1 | 1 | 153000 | 153000 |
| 7 | Վարորդ /ա/ | 1 | 1 | 173000 | 173000 |
| 8 | Բանվոր | 8 | 6.5 | 115000 | 747500 |
| 9 | Հավաքարար | 4 | 4 | 115000 | 460000 |
| 10 | Էլեկտրիկ | 1 | 1 | 135000 | 135000 |
| 11 | Եռակցող | 1 | 1 | 135000 | 135000 |
| 12 | Բարձող բանվոր | 1 | 1 | 135000 | 135000 |
| 13 | Աշխղեկ | 2 | 2 | 163000 | 326000 |
| 14 | Դահսպեչեր հաշվառող | 1 | 0.5 | 115000 | 57500 |
| | | | | | |
| 15 | Վարորդ | 2 | 2 | 137500 | 275000 |
| | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 32 | 29 | | 4192000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 52400000 |
| | | | | | |
| **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | | | | |
| 1 | Պայմանագրային աշխատող-տրակտորիստ | 2 | 1 | 104000+բերած եկամտի 25%-ի չափով | 115,000 |
| 2 | Պայմանագրային աշխատող-կոմբայնավար | 2 | | վարձատրությունը՝ բերած եկամտի 25%-ի չափով | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 4307000 |
| | **ԸՆԴԱՄՆԵԸ** | | | | **53837500** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական,** N 36-Ա

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-ԻՆ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկաները անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել (ամրացնել) համայնքային ենթակայության Ալավերդի համայնքի «Ալավերդու բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ալավերդի համայնքի ավագանու՝
15 մարտի 2024 թվականի N 36-Ա որոշման

# ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅԻ ՑԱՆԿ

| Հ/Հ | ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՁԵՌՔ-ԲԵՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ | ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|---|
| 1 | Հացահատիկային կոմբայն Ս-300/Նովա 340 | 2020 | Շնող բնակավայր | 1 |
| 2 | Հացահատիկային կոմբայն Նովա 340 | | Ճոճկան բնակավայր | 1 |
| 3 | MT3 82.1 | | Ճոճկան բնակավայր | 2 |
| 4 | Մամլիչ-բարդոցիչ | 2008 | Ճոճկան բնակավայր | 1 |
| 5 | Գութան 3 խոփանի ПЛН-3-85 | 2008 | Ճոճկան բնակավայր | 1 |
| 6 | Հորատող սարքավորում ГНУ-2.5 | | Ճոճկան բնակավայր | 1 |
| 7 | Հացահատիկահավաք շարքացան СПЛ-4 | 2008 | Ճոճկան բնակավայր | 1 |
| 8 | Արևածաղկի շարքացան | 2008 | Ճոճկան բնակավայր | 1 |
| 9 | Արևածաղկի կուլտիվատոր | 2009 | Ճոճկան բնակավայր | 1 |
| 10 | Կուլտիվատոր КПН-4 | 2009 | Ճոճկան բնակավայր | 4 |
| 11 | Սրսկիչ դաշտ կախովի թևավոր SP100 | | Ճոճկան բնակավայր | 1 |
| 12 | Կախովի սկավառակային խոտահավաք ГВКН | | Ճոճկան բնակավայր | 1 |
| 13 | Շարքացան մեխանիկական կիսաքարշակ N 292 | | Ճոճկան բնակավայր | 1 |
| 14 | Դիզելային մոտոբլոկ խոտհնձիչ BSC740P | | Ճոճկան բնակավայր | 1 |
| 15 | MT3 82.1 | | Մեծ Այրում բնակավայր | 1 |
| 16 | Գութան 3 խոփանի | | Մեծ Այրում բնակավայր | 1 |
| 17 | Մամլիչ RSA 86 | | Մեծ Այրում բնակավայր | 1 |
| 18 | Կախովի կուլտիվատոր, հողի անընդմեջ մշակման | | Մեծ Այրում բնակավայր | 1 |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 37-Ա**

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով հև հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան և տրանսպորտային միջոցները անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել (ամրացնել) համայնքային ենթակայության «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՋԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՋԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ալավերդի համայնքի ավագանու՝
15 մարտի 2024 թվականի N 37-Ա որոշման

# ՑԱՆԿ

| Հ/Հ | ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|
| 1 | JAC միկրոավտոբուս | 1 |
| 2 | FORD TRANSIT 22TD | 1 |
| 3 | Տրակտոր (Բելառուս 82.1) | 1 |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 38-Ա**

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-088-008-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.098 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ, 60-րդ հոդվածներով, 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի VI գլխով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.5 կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21) ենթակետով, 102-րդ հոդվածի 4-րդ կետով, հաշվի առնելով, որ քննարկվող հողամասի օգտագործման արդյունավետությունը քաղաքացու կողմից կբարձրացվի, հիմք ընդունելով Գարիկ Սամվելի Փարսադանյանի դիմումը, սեփականության իրավունքի N 15082022-06-0013 վկայականը, համայնքային սեփականության N 2287063 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Տալ համաձայնություն համայնք Ալավերդի, Շնող գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-088-0008-0009 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.098 հա մակերեսով հողամասի /վկայական N 2287063/, փոխանակությանը քաղաքացի Գարիկ Սամվելի Փարսադանյանին սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, Շնող գյուղ, 12-րդ փողոց, 52 հասցեում գտնվող, կադաստրային 06-088-0002-0013 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.132 հա մակերեսով հողամասի հետ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Գարիկ Սամվելի Փարսադանյանի հետ կնքելու հողամասի փոխանակության մասին պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈ ԻՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎ ԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**15 մարտի 2024 թվական, N 39-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասերի հատակագիծը (չափագրման ծածկագիր՝ 202477SLXR) Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0001 ծածկագրից առանձնացվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0.13101 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 1 050 000 (մեկ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ
**15 մարտի 2024 թվական, N 40-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ UAZ ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻՆ ԿԱՃԱՃԿՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՃԱՃԿՈՒՏ-ԱԼԱՎԵՐԴԻ ԵՐԹՈՒՂԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՌԵԼԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքին պատկանող UAZ մակնիշի տրանսպորտային միջոցին Ալավերդի համայնքի Կաճաճկուտ բնակավայրի բնակիչների համար Կաճաճկուտ-Ալավերդի երթուղի իրականացնելուն և վառելիք տրամադրելուն:

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի